



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE


Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՀԱՆԳԻՄ

### Տ. ՎԱԶԵ Ա. ՔՅՆՅ. ՆԱԳԳԱԾԵԱՆԻ



Թեմիս բարեցան Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հոգեւորականաց Դասը, Կրօնական Ժողովը եւ Ազգային Վարչութիւնը խոր ցաւով կը գուման Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ու մեր Թեմի բազմավաստակ հոգեւորականներէն՝ Արք. S. Վաչէ Աւ. Ջիլյ. Նազգաշեանի վախճանումը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 8 Փետրուարի յետմիջօրէին, յետ Երկարատեւ հիւանդութեան:

Վախճանեալ Քահանայ Հայրը շուրջ 50 տարիններու նուիրեալ ծառայութիւն ունեցած է մեր Եկեղեցւոյ ու Ժողովուրդին: Ան յետ եղեռնեան առաջին սերունդէն Եր. որբ մասցած է մանկութեան. պատանութեան սեմին, ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը եւ ապա, ամբողջ կեանքը նուիրած է սերդնակերտ ու Եկեղեցանուեր ծառայութեան:

Քահանայական ծեռևարութիւնը ստացած է 1961ին, ծառայած է Պրազիլիոյ եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան ու Արեւմտեան թեմերուն մէջ: Արեւմտեան մեր Թեմին մէջ, 1976էն Ետք, շուրջ Երկու տասնամեակ, իբրեւ հոգեւոր հովիւ ան ծառայած է Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ յարկին տակ:

Տէր Հօր վերջին օժումն ու թաղման կարգը տեղի պիտի ունենան Շաբաթ, 13 Փետրուար 2010, կեսօրէ առաջ ժամը 11:30ին, Յոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ մէջ, յընթացս Ս. Պատարագի:

Այս տիսուր առիթով, խորին ցաւակցութիւն կը յայտնենք Երեցկին Լուսածին Նազգաշեանի, զաւակներուն՝ Գեղրգի, Ծովիկի, Գոհգորի, եւ Զարեհի ու ընտանեկան պարագաներուն ու բոլոր հարազատներուն:

Յիշատակն արդարոյ օրինութեամբ Եղիցի:

## IN MEMORIAM ARCHPRIEST FR. VATCHE NACCASHIAN

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Clergy members, and the Religious and Executive Councils mourn the passing of Archpriest Fr. Vatche Naccashian which occurred on Monday, February 8<sup>th</sup>, 2010, following a long illness.

Orphaned as a child, he entered the Seminary of the Catholicosate of Cilicia and devoted the rest of his life to serving the Armenian Church. In 1961 he was ordained into the priesthood and served the communities of Brazil, and the Eastern and Western Prelacies. From 1976 on, he served for two decades within the Western Prelacy as pastor of St. Garabed Church in Hollywood.

Extreme Unction will take place during funeral mass on Saturday, February 13<sup>th</sup>, at 11:30 a.m. at St. Garabed Church.

Our deepest condolences to Yeretsgin Lousadzin Naccashian, children Kevork, Dzovig, Krikor, Zareh, and their families and relatives.

May his memory remain ever blessed.

\*\*\*

## **ՄԵԾ ՊԱՐՁԻ ԾՐՁԱՆԻՆ ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՒ ՀԱԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵԶ**

Երկուշաբթի, 15 Փետրուարին, կը սկսի Ս. Յարութեան տօնը կանխող Մեծ Պահոց քառասնօրեայ շրջանը:

Մեծ Պահոց շրջանին, Թեմիս բոլոր Եկեղեցիներուն մեջ տեղի պիտի ունենան Արեւագալի եւ Հսկումի արարողութիւններ, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերուն:

Չորեքշաբթի, 17 Փետրուարին, Թեմիս բարեցան Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետ Ենսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Արեւագալի առաջին արարողութեան: Ժամերգութեան ներկայ պիտի ըլլան Ֆերահեան Ազգ. Վարժարանի աշակերտները:

Առաջնորդ Սրբազան աշակերտներուն պիտի խօսի մեծ պահոց մասին:

Արարողութենեն ետք, Եկեղեցւոյ կից, «Տիգրանեան» սրահին մեջ, տեղի պիտի ունենայ Ենսինոյի ՀՕՄ-ի «Անահիտ» Մասնաճիւղի Մեծ Պահոց ճաշկերոյթը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ճաշկերոյթին եւ պիտի փոխանցէ իր օրինութեան խօսքը:

## **GREAT LENT SUNRISE AND VESPER SERVICES**

Monday, February 15<sup>th</sup>, 2010, is the first day of Great Lent. During the 40-day period, sunrise and vesper services will take place in all churches on Wednesdays and Fridays.

On Wednesday, February 17<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over the first sunrise service at Holy Martyrs Church in Encino and will deliver his message on Great Lent to Ferrahian School students who will be in attendance.

Following the service a Great Lent luncheon organized by the ARS Anahid Chapter will take place at "Dikranian" Hall. The Prelate will attend and convey his blessings.

\*\*\*

## ՀՈԳԵՒՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ՂԵՂՈՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Սրբոց Ղեղոնդեանց Զահանայից Տօնին, որ տօնն է և նաեւ Յայ Զահանայութեան, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. S. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի նախագահութեամբ եւ մասնակցութեամբ Թեմիս միաբան հայրերուն եւ Զահանայից դասուն, այս տարի հոգեւորականաց համագումարը տեղի ունեցաւ Երեջաբարի, 9 Փետրուար 2010-ին, Ազգ. Առաջնորդարանէ Ներս: Յամագումարին հիլաբար Ներկայ էր և նաեւ Ս. Աթոռոյս Երեց միաբաններէն եւ Թեմիս նախկին առաջնորդներէն՝ Գերշ. S. Եփրեմ Արք. Թապագեան:



Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովհիւ, Հոգա. S. Վաղինակ Վրդ. Մելոյեան, խօսեցաւ «Զահանայական Կոչումի» Նիւթին շուրջ: Յայր Սուրբը կարեւոր ութզ կետեր նշեց, վեր բերելով Զրիստոսի օրինակով ճշմարիտ հովհիւ կոչումին, Նկարագրին եւ առաքելութեան հետ առնչուող Էական յատկանիշները:

Յամագումարը ընդհանրապես զբաղեցաւ Զահանայական պաշտօնի եւ առաքելութեան վերարժեւորման հրամայականներով, ինքնաքննութեան անկեղծ փորձերով լուսարձակի տակ առաւ հովուական, ծիսական-

Յամագումարը  
ընդգրկեց առաւտեան  
Ժամերգութիւն,  
Նախատօնակ եւ հոգեւոր  
խորհրդածութիւն, Նիւթ  
ունենալով  
Բ.  
Թեսաղոնիկեցիս 3-րդ  
գլուխը, ուր յորդոր կը  
տրուի աղօթելու եւ  
աշխատելու, ինչպէս և առաջնորդական պաշտօնը  
լուսարձակի տակ կ'առնուի:

Սան Ֆրանսիսխոնյի Ս.

արարողական թէ վարչական պատասխանատութեանց եւ պարտականութիւններու հոգեւոր դաստիարակչական բնագաւառները:

Նկատի ունենալով որ 2010 տարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ հօչակուած է «Դայ Կոնջ Տարի», համագումարը այդ ուղղութեամբ համապատասխան ժողովրդային ու դաստիարակչական բնոյթի ծրագիրներ մշակեց, թելադրելով ծխական շրջաններու Հովիւներուն, որ յատկապէս Մեծ Պահոց շրջանին, անդրադառնան սուրբ գրային տիպարներու, ինչպէս նաեւ Վարք Սրբոցի սրբուհիներուն կեանքին, եւ տարուան ընթացքին կազմակերպեն լսարանային եւ դասախոսական դաստիարակչական բնոյթով երեկոյթներ: Այս եւ այլ ծրագիրներու մասին յետագային մամուլով մեր ժողովուրդը տեղեակ պիտի պահենք:

Երեկոյեան Կենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Ս. Ղեւոնդեանց Զահանայից նուիրուած Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ: Պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց, Հոգ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

Յաւարտ Ս. Պատարագին, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր, հոգեհանգիստ կատարուեցաւ Յիւս. Ամերիկայի մէջ ծառայած հոգելոյս Եկեղեցականներու ու Արեւմտեան մեր Թեմին ծառայած ու այժմ հանգուցեալ բոլոր Եկեղեցականներու հոգւոց խաղաղութեան եւ լուսաւորութեան համար:

Սրբոց Ղեւոնդեանց Զահանայից տօնը Եզրափակուեցաւ Վարդանանց եւ Ղեւոնդեանց նուիրուած հայրենասիրական Երգերու Երգեցողութեամբ, որուն իրենց մասնակցութիւնը բերին դպրաց դասն ու հաւատացեալ ժողովուրդը:

## CLERGY CONFERENCE AND DIVINE LITURGY ON THE FEAST OF STS. GHEVONTIANK



The annual clergy conference on the occasion of Sts. Ghevontiank took place on Tuesday, February 9<sup>th</sup>, at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of the clergy order. Former Prelate H.E. Archbishop Yeprem Tabakian also participated.

The day began with morning services at the Chapel, followed by lectures and spiritual meditations. Speaking on the topic “The Calling of Clergy”, Pastor of St. Gregory Church of

San Francisco Very Rev. Fr. Vaghinag Meloian lectured on the characteristics of being a good shepherd in the example of Jesus Christ.

The conference discussions largely focused on the responsibilities and mission of clergy members, from pastoral duties to administrative.

In celebration of the “Year of the Armenian Woman” proclaimed by H.H. Catholicos Aram I, a number of educational and cultural events were drafted and clergy members were encouraged to organize events in their local parishes exalting the lives and virtues of women in the Bible and our saints.

In the evening, Divine Liturgy was celebrated at St. Mary’s Church in Glendale. The celebrant was Very Rev. Fr. Vaghinag Meloian.

At the conclusion of the service, the Prelate presided over requiem for departed clergy members. The evening concluded with the singing of songs dedicated to the Feasts of Sts. Ghevontiak and Vartanank.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԿԱՏԱՐԵՑ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԽՈՐՅՐԴԱՏԱՆ ԲԱՑՈՒՄՆ ՈՒ ՕՐՅՆՈՒԹԻՒՆԸ



Ինչպես ծանօթ է, Ազգային Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան մեջ, Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Սարտիրոսեանի տևորինումով, իրաքանչիր ամսուան առաջին ծաբաթ երեկոյեան տեղի կ'ունենայ Ս. Պատարագ կամ եկեղեցական արարողութիւն, ի հոգեւոր սպասարկութիւն մեր նոր սերունդին ու հաւատացեալ ժողովուրդին: Ծաբաթ, 6 Փետրուարի երեկոյեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ազգ. Առաջնորդարանի մատրան մեջ: Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց

Հոգ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան: Ս. Պատարագին երգեցողութիւնը կատարեցին Ազգային Առաջնորդարանի «Լուսաւորիչ» Երիտասարդաց երգչախումբի անդամներ: Ներկայ էին Խորհրդատան բարերարները՝ Տեր եւ Տիկին Յովսէփ եւ Էլո Պոյաճեան եւ ընտանիքի անդամները, ինչպես նաև Առաջնորդ Սրբազն Յօր Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան ընթրիքի գլխաւոր հովանաւորները՝ Զակարեան եւ Քաջանեան ընտանիքները:

Ս. Պատարագին ետք, տեղի ունեցաւ Սատրան կողքին գտնուող Խորհրդատան բացումն ու օրինութիւնը, ձեռամբ՝ Առաջնորդ Սրբազնին: Առաջնորդ Սրբազնը վեր առաւ բարերարին՝ Տիար Յովսէփ Պոյաճեանի



Նուիրեալ ծառայութիւնները Ազգ. Առաջնորդարանիս ու մեր Եկեղեցիներուն. արդարեւ, Տիար Յ. Պոյաճեան անդամ է Ազգ. Առաջնորդարանի Շենքի Յաձնախումբին, անոր ծառայութիւնները ի սպաս դրուած են Նաեւ Փաստինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ ու Մոլթեպելոյի Ս. Խաչ Սայր Տաճարին: Անոր Նուիրաբերումը տարածուած է Նմանապէս հայկական միութիւններու:

Յաւարս Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշտակ Պոյաճեան, Զափարեան եւ Յացպանեան ընտանիքներու ծնողներուն եւ հանգուցեալ հարազատներուն:

## PRELATE CONDUCTS OPENING CEREMONY AND BLESSING OF THE PRELACY VESTRY



On the evening of Saturday, February 6<sup>th</sup>, 2010, Divine Liturgy was celebrated at the Prelacy “St. Dertad and St. Ashkhen” Chapel. Divine Liturgy or evening services take place at the Chapel on the first Saturday of each month.

Divine Liturgy was celebrated by Very Rev. Fr. Barthev Gulumian. The “Lousavorich” youth choir participated in the Liturgy.

Following the service, the Prelate conducted the opening and blessing of the Vestry located adjacent to the Chapel. Vestry sponsors Mr. and Mrs. Hovsep and Elo Boyajian and family members

were present for the ceremony. Also in attendance were this year’s Christmas Dinner sponsors, the Jabarian and Hasbanian families.

The Prelate spoke highly of the Mr. Boyajian’s many years of service to the Armenian Church and community, which includes his contributions as a member of the Prelacy Building Committee as well as to St. Sarkis Church of Pasadena and Holy Cross Cathedral of Montebello.

Requiem for the souls of departed Boyajian, Jabarian, and Hasbanian family members was offered prior to the ceremony.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՆՏԱՅԻՆ ՊԱՏՎԱԽԱՆԱՏՈՒ ՍԱՐՃԸՆՑ ՔԵՐՈՒԻՆ ՈՒՂՆԿԸ



Չորեքշաբթի, 10 Փետրուարի առաւօտեան ժամը 11ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Սուշեն Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Սարճնութ քերուին Ուղնկի, որ պատասախանատու պաշտոն կը վարէ բանտային համակարգին մէջ եւ Շերիֆի գրասենեակին մէջ վարիչն է կրօնական-համայնքային եւ կամաւոր աշխատանքի բաժանմունքին: Ներկայ էր նաեւ Բարձ. Շաֆֆի Սրկ. Կարապետեան, որ Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ, տարիներին ի վեր ծառայութիւններ կը մատուցէ Լու Անճելըսի ու շրջակայքի հայ բանտարկեալներու:

Հիւր պաշտոնատարը ընդիանուր գիծերու մէջ ծանօթութիւններ տուաւ իր պատասխանատուութեանց ծիրին մէջ տարուող աշխատանքներուն մասին: Ան յայտնեց, որ այս ու նման հանդիպումներ իրեն առիթ կ'ընծայեն, որպեսզի աւելի մօտեն ծանօթանայ հայ համայնքի Ներկայացուցչական դեմքերուն հետ, ի խնդիր ծառայական աշխատանքի մէջ գործակցութեան դաշտերու ընդարձակման:

Առաջնորդ Սրբազնը, իր կարգին, բացատրութիւններ տուաւ բանտարկեալներու հոգեմտաւոր հոգածութեան համար Ազգ. Առաջնորդարանի աշխատանքներուն մասին, նշելով, որ ոչ միայն Շաֆֆի Սարկաւագ, այլ նաեւ հոգեւորականներ հերթական կանոնաւոր այցելութիւններ կու տան բանտեր. ան նշեց, որ Շաֆֆի Սարկաւագ յաւելեալ ծառայութիւններ կը տրամադրէ նաեւ բանտեն արձակուած երիտասարդներու, որպեսզի անոնք վերստին ներդաշնակուին ընկերութեան հետ: Ի պատասխան ոստիկան-պատասխանատուին, Առաջնորդ Սրբազնը նաեւ յաւելեալ բացատրութիւններ տուաւ հայութեան դիմագրաւած պատմական ու այլ հարցերու մասին:

**PRELATE WELCOMES SERGEANT KERWIN WONG OF THE LOS ANGELES SHERIFF'S DEPARTMENT**

On the morning of Wednesday, February 10<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Sergeant Kerwin J. Wong, head of the Los Angeles Sheriff's Department Religious and Volunteer Services. Sergeant Wong was accompanied by Chaplain Rafi Garabedian who heads the Prelacy prison ministry program.

Sergeant Wong spoke of his responsibilities within the Sheriff's Department and familiarized the Prelate with the duties entrusted to him in his particular department. He welcomed such meetings for they offer him the opportunity to become more closely acquainted with our community leaders, and result in closer collaboration.

The Prelate detailed the spiritual services that our offered to Armenian inmates through the prison ministry program, noting that alongside Chaplain Rafi, clergy members regularly visit inmates and rehabilitation services are also offered to released inmates to ease their transition back into society. The Prelate also elucidated on the historical and present-day struggles of the Armenian people and other related issues.

\*\*\*